Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/162» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02.09.2019թ.
Ժամը՝ 10:10

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյան /գնահատող/, Ա. Սարգսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /բացող/, Ա. Հովհաննիսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները բավարարող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/162» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Գոլդ-Նեթ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/162» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Կիրակոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/162»** ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Կենտրոն վարչական շրջանի տարածքում գտնվող աստիճանների ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ..... Ա. Հարությունյան

..... Ա. Սարգսյան

..... Ռ. Աբրահամյան

..... Ա. Հովհաննիսյան

Քարտուղար՝ ..... Ս. Եղիազարյան